ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 26 » դեկտեմբերի 2024 թ. N 1834 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև «Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշման 1-ին հավելվածի 13-րդ կետի 13-րդ ենթակետը.

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում «1033 Աջակցություն հասարակական և այլ կազմակերպություններին» ծրագրի շրջանակներում իրականացվող «12001 Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին» միջոցառման՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված 25,000.0 հազար ՀՀ դրամը՝ ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, կրթության, էթնիկ ինքնության պահպանությանն ու զարգացմանը, ինչպես նաև իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, բաշխել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջև՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ